



## ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Հայրապետական փոխանորդ Արարատյան թեմի)

### «ԱՐԱՐԱՏ»-Ը ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1878 թվականի մարտի 3-ին ստորագրվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը միջազգային հարաբերությունների լարված պայմաններում: Ռուսական պատվիրակությանը հաջողվում էր Արևմտյան Հայաստանի հարցը մտցնել հաշտության պայմանագրի մեջ, որպես նրա 16-րդ հոդվածը, որն ուներ հետևյալ բովանդակությունը. «Նկատի ունենալով, որ Հայաստանում գրաված, բայց Թյուրքիային վերադարձվելիք վայրերից ռուսական զորքի հեռանալը կարող է կոնվենտի և բարդությունների տեղիք տալ և բացասաբար անդրադառնալ երկու պետությունների բարյացակամ հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայկական մարզերում, առանց ուշացման, գործադրել տեղական պայմաններից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և հայերի ապահովությունը պաշտպանել քրդերից ու չերքեզներից»<sup>1</sup>:

Այնուհետև, եվրոպական պետությունների մրցակցության պատճառով, Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը վերաքննության ենթարկվելով, դառնում էր Բեռլինի վեհաժողովի տխրահռչակ 61-րդ հոդվածը, ըստ որի ռուսական բանակը պետք է անհապաղ

դուրս բերվեր Արևմտյան Հայաստանից և ռուսական վերահսկողության փոխարեն ստեղծվում էր եվրոպական խոշոր պետությունների հավաքական վերահսկողություն:

Բեռլինի ժողովի 61-րդ հոդվածից հանվել էր «Հայաստան» անունը և մտցվել՝ «հայաբնակ» տերմինը:

Հովհաննես Թումանյանը այս մասին գրում է. «Հայկական հարցը Բեռլինից չի սկսվում և եվրոպական պետությունները չեն դրել, այլ Սան-Ստեֆանոյից է սկսվում և ռուսներն են առաջին անգամ հայկական հարցը մտցրել միջազգային խնդիրների շարքը»<sup>2</sup>:

Հայ ժողովուրդը 1878 թ. Սան-Ստեֆանոյի և Բեռլինի ժողովներից հետո ապրում է համազգային ուրախության և միաժամանակ դառն հուսախաբությունների մի շրջան:

Շամանյան կառավարությունը յուրահատուկ ձևով է հասկանում և գործադրում հայկական վեց գավառներում բարենորոգումների ծրագիրը: Կազմվում է վեց վիլայեթներում ապրող հայության սիստեմատիկ բնաջնջման ծրագիրը. «համիդիե» գնդերի կազմությամբ, որոնք արտաքենապես պետք է ապահովելին Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի կյանքի, պատվի, ինչքի անվտանգությունը, բայց ներքնապես, գաղտ-

<sup>1</sup> Сборник договоров России с другими государствами, 1856—1917, Москва, 1952, стр. 168—169.

<sup>2</sup> Հովհաննես Թումանյան, Բ. 4, էջ 225—226:

նորեն հրահանգված էին թաղել հայկական հարցը կոտորածների կազմակերպումով:

Խրիմյանը երբ հայրապետական Աթոռ բարձրացավ, արդեն Արևմտյան Հայաստանից հասնում էին ջարդերի և կոտորածների արյունոտ լուրերը: Եվ այդ թվականից սկսած Մայր Աթոռը Ամենայն Հայոց հայրապետների գլխավորությամբ ստանձնում էր արևմտահայության ապահովության և պաշտպանության դեկավարությունը և իր բոլոր միջոցներով հետապնդում հայկական հարցի խաղաղ լուծումը:

Այդ տարիներից «Արարատ» ամսագիրը լայնորեն իր էջերն է տրամադրում հայկական հարցի վերաբերյալ, հայոց հայրապետների դիմումներին, կոչերին, բողոքներին և Արևմտյան Հայաստանից ստացված տխուր լուրերի հրատարակությանը:

«Արարատ» ամսագիրը հայրենասիրական խորունկ գիտակցությամբ պաշտպան էր կանգնում արևմտահայության իրավունքներին և պահանջում էր հայկական հարցի արդար լուծմանը:

Պետք է նրախտագիտությամբ արձանագրել, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը համարձակորեն կանգնում էր հայրենասիրական այդ դիրքերի վրա 1895 թ. մինչև 1919 թվականը:

Թորքական բռնապետությունը, սկսած 1870-ական թվականներից, սիստեմատիկ ջարդեր կազմակերպեց Արևմտյան Հայաստանում: 1870-ական թվականներին կոտորածները սկսեց Սասունից, այնուհետև 1898 թվականին՝ Վասպուրականում: Այդ կոտորածների առթիվ «Արարատ»-ը մեղադրում էր նաև Արևմտյան պետություններին: «Քրիստոնյա աշխարհի բոլոր ջանքերը ծնեցին մեռյալ բարեկորոզումներ, որ սկսվեցան տմարդի կոտորածներով և վերջանում են ահա երկրի ամաչանալով: Այս երկու տարվա ընթացքում շատ խոսվեցավ և գրվեցավ հայոց մասին, բայց իսկական ճշմարտությունը երևան չէլավ»<sup>3</sup>:

1896 թ. հայկական կոտորածի ժամանակամիջոցին սկսվում է Արևմտյան Հայաստանի գաղթականության հոսանքը դեպի Արարատյան դաշտ. «Ս. Էջմիածինը պատրաստել է օրական 500—600 գաղթական, որոնք միշտ տեղի տալով նորեկներին, ցրվում են դեպի կենտրոնական քաղաքներն ու հայաքնակ գյուղերը»<sup>4</sup>:

Ս. Էջմիածինը գաղթականներին Հայաստանի շրջանները բաժանելուց բացի, հիվանդներին վանքում էր խնամում. «Վեհափառ հայրապետի հրամանով վանքի գյուղի

միջի տունը, նախկին տղայոց դպրոցը, փոխարկվել է հիվանդանոցի, ուր տասնյակ հիվանդներ են խնամվում ճեմարանի բժշկի ձեռքով: Գաղթականների մի մասը ևս վանքի գոմանոցումն է, որոնց վրա հոգաձություն ունեն ճեմարանի սարկավազ աշակերտները»<sup>5</sup>:

Այնուհետև «Արարատ» ամսագիրը «Տանկահայք» ենթավերնագրի տակ խոսում է մանրամասնորեն Հայաստանի և Կիլիկիայի մեջ տեղի ունեցած 1895—1896 թվականների հայկական կոտորածների մասին, հրատարակելով նաև այդ հարցերի առնչությամբ բազմաթիվ վավերագրեր<sup>6</sup>:

Խրիմյան Հայրիկը 1898 թվին գրում է համար 493, 494, 497, 498, 499 սրբատու կոնդակները ուսանալուց թեմական արքեպիսկոպոսներին և պատվիրում է աջակցել «ի գործ վերադարձի գաղթականացի հայրենիս»<sup>7</sup>, իսկ 501 կոնդակով Կ. Պոլսի պատրիարքին, որով պատվիրում է բանակցել առ որ անկ է գաղթականների ապահով վերադարձի մասին յուրաքանչյուրը իր հայրենիքը և տեղը, և վիճակավոր առաջնորդներին և փոխանորդներին ջանալ՝ ըստ ամենայնի «արգել լինել հետ այսու նորոգ գաղթականությունեան»<sup>8</sup>:

1909 թվականի ապրիլի 25-ին Ամենայն Հայոց Հայրապետի տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսը, Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունուն հեռագրում է և խնդրում մանրամասն տեղեկություններ հաղորդել Կիլիկիո մեջ տեղի ունեցած վերջին սոսկալի ջարդերի մասին:

Պատրիարքական տեղապահը իր գեկուցագրում մանրամասն տեղեկություններ տալուց հետո խնդրում է, որ սինոդը և հայրապետի տեղակալը օգնության հասնեն Կիլիկիո հայությանը<sup>9</sup>:

Սինոդը որոշում է միանվազ 500 ուրբի ուղարկել Կիլիկիո աղետյալներին<sup>10</sup>:

«Արարատ» ամսագիրը 1908 թվականի 1146—1147 էջերում և 1909 թ. 107—108 էջերում տպագրում է Իզմիրյան պատրիարքի կոչը Տանկա-Հայաստանի և Կիլիկիո մեջ սովի մասին: Հայրապետական ամսագիրը հրավեր է կարդում նյութապես օգնել սովյալներին: Ս. Էջմիածնի միաբանությունն էլ իր միջից հանգանակում է 280

<sup>5</sup> Նույնը, էջ 419:

<sup>6</sup> Նույնը, էջ 420—424, 472—476, 525—530, 578—586:

<sup>7</sup> «Արարատ», 1898, էջ 235:

<sup>8</sup> Նույնը, էջ 235:

<sup>9</sup> «Արարատ», 1909, էջ 526:

<sup>10</sup> Նույնը, էջ 416:

<sup>3</sup> «Արարատ», 1896, էջ 417:

<sup>4</sup> Նույնը, էջ 419:

նույնի և այն Մետրոպ վարդապետի միջոցով փոխադրում է Կ. Պոլիս, պատրիարքարան<sup>11</sup>:

1912 թ. նոյեմբերի 10-ին 1482 թվակիր կոնդակով Գևորգ Ե-ն Պողոս-Նուպար փաշային նշանակում է հայրապետական պատգամավոր և 1913 թվականի հունվարի 4-ին՝ ազգային պատվիրակության նախագահ<sup>12</sup>:

Գևորգ Ե-ի հանձնարարությամբ Պողոս-Նուպար փաշան ահագին ճիգ և ջանք թափեց այդ ուղղությամբ, ինչպես երևում է կաթողիկոսի և Պողոս-Նուպար փաշայի միջև փոխանակված հեռագրերից, որոնք տպագրված են «Արարատ»-ի էջերում:

Գևորգ Ե կաթողիկոսը օրհնության և շնորհակալության հատուկ կոնդակ է ուղղում Պողոս-Նուպար փաշային 1914 թ. փետրվարի 20-ին 258 համարով և հանձնարարում է նրան շարունակել որպես իր ներկայացուցիչը՝ ազգագուտ իր գործունեությունը<sup>13</sup>:

«Արարատ» ամսագիրը իր 1914 թվականի փետրվար-մարտ համարներում մանրամասն տեղեկություններ է տվել «Տաճկա-Հայաստանի բարեկորգումների ծրագիրը» խորագիրը կրող հոդվածաշարքում, ինչպես նաև Պողոս-Նուպար փաշայի գործունեության մասին:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Տաճկա-Հայաստանում սկսվում են թուրքական և քրդական շարժումները, Բիթլիսի, Մուշի, Բաղեջի հայերի կոտորածը:

Գևորգ Ե-ն հրահանգում է իր դիվանին, ինչպես նաև Կ. Պոլսո տ. Ջավեն պատրիարքին՝ «շուտով մանրամասն զեկուցանել Բիթլիսի, Մուշի հայերի վիճակի մասին, լրագրերում հուզիչ լուրեր կան»<sup>14</sup> և ստանում է տեղեկություններ այդ իրադարձությունների կապակցությամբ:

1914 թ. սեպտեմբերի 28-ին 1511—1523 թվահամար կոնդակով կոչ է անում իր բարձր հովանավորության ներքո առնել հայ ժողովրդին եղբայրական օգնության գործը, որի նպատակն է ամեն կերպ խնամել պատերազմից վերադարձած վիրավոր և հիվանդ զինվորներին և նյութապես օգնել նրանց անօգնական ընտանիքներին<sup>15</sup>:

1914 թ. նոյեմբերի 15-ին 1750, 1751 համար կոնդակներով Երևանի փոխ-թեմակալ

տ. Խորեն եպիսկոպոսին և Վրաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Մետրոպ եպիսկոպոսին հրահանգում է անհապաղ գնալ պ. պ. Հովսեփ Խունունցի, Ծիրվանգաղեի, Հովհաննես Թումանյանի և Սմբատ Խաչատրյանի ընկերակցությամբ ոռու-տաճկական պատերազմի ճակատ, նախ հայտնել գործի հրամանատարներին Նորին վեհափառության օրհնությունն ու բարեմալությունները, երկրորդ՝ գորաբանակն այցելելու ժամանակ հարմարավոր տեղում կատարել Կայսերական մատթանք, օրհնելով գրականներին ու գործին. երրորդ՝ հաղորդել բոլոր հայ զինվորներին և կամավորներին՝ լինել միշտ պարտաճանաչ, լավ և օրհնակելի բոլոր գործերում, չորրորդ՝ քննել Ռուսաց տիրած մասի հայ գյուղական ժողովրդի վիճակը և նրանց կրոնական ու բարոյական և տնտեսական կացության մասին մանրամասն տեղեկություն ժողովել, և, հինգերորդ՝ ուսումնասիրել հայոց ազգային կրոնական ու աստվածաբան հաստատությունների, կալվածների վիճակը. նաև նույն շրջանի հայ հոգևորականության մասին տեղեկություն քաղել, պատվիրելով վերջինս միշտ մխիթարել հոգեպես և քարոյապես հայ ժողովրդին, որ ծանր կացության մեջ է, շրջագայությունից հետո մանրամասն զեկուցագիր ներկայացնել Նորին վեհափառությանը<sup>16</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմը հայ ժողովրդի համար հանդիսացավ կործանարար:

Եղեռնի օրերին ս. Էջմիածինը իր կարելին արել է փրկելու համար մնացորդը մեր ժողովրդի:

Ս. Էջմիածնի կատարած դերն ընդգրկում է գործունեության մի քանի բնագավառ: Հատկապես շատ կարևոր էր ս. Էջմիածնի հովանավորությամբ գործող եղբայրական օգնության հանձնաժողովի կատարած աշխատանքը: Գաղթականների օգնության գործը արդյունավորապես կազմակերպելու համար երջանկահիշատակ Գևորգ Ե կաթողիկոսը գրում է իր 28 դեկտեմբեր 1914 թվականի համար 1990 կոնդակը, որ վշտահար հայրապետն ասում է. «Դարձյալ լսում ենք Հայաստան աշխարհի ողբը և աղաղակը՝ մեր սիրելի զավակների անօգնական վիճակի մասին»<sup>17</sup>:

Կաթողիկոսի հրամանով Երևանի փոխ-թեմակալ տ. Խորեն եպիսկոպոս Մուրատբեկյանը մեկնում է Իգդիր, կազմակերպելու եղբայրական օգնության հանձնաժողով,

<sup>11</sup> Նույնը, էջ 137:

<sup>12</sup> «Արարատ», 1914, էջ 120—121:

<sup>13</sup> «Արարատ», 1914, էջ 195—198, 217—219, 404—406:

<sup>14</sup> Նույնը, էջ 325:

<sup>15</sup> Նույնը, էջ 870—873:

<sup>16</sup> «Արարատ», 1914, էջ 1066:

<sup>17</sup> «Արարատ», 1915, հունվար, էջ 3, 4, 5:

կարգադրություններ անելու, ընդունելու և խնամելու ժամանակ գաղթականների:

Այդ օրերին շարունակվում է գաղթական արևմտահայերի հոսանքը դեպի Իգդիր: Դարձյալ կաթողիկոսի հրամանով Իգդիր է մեկնում նաև տ. Գարեգին վարդապետ Հովսեփյանը, տեղական հանձնաժողովի հետ ընդունելու և պատասխարելու գաղթականներին, ինչպես նաև կազմակերպելու նրանց փոխադրության գործը դեպի Էջմիածին: Նույն նպատակով Արիստակես վարդապետը և ճեմարանի մի քանի ուսանողներ մեկնում են Մարգարա գյուղը՝ սնունդ մատակարարելու գաղթականներին և ճանապարհելու նրանց դեպի ս. Էջմիածին:

1914 թվականի դեկտեմբերի 26-ին ս. Էջմիածին է հասնում գաղթականների սուաջին մեծ հոսանքը: Ցուրտը, քաղցը, հոգևածությունն ու բարոյական տանջանքները միանգամայն ճնշել և կենդանի մեռելներ էին դարձրել գաղթականներին: Այդ մասին մանրամասն նկարագրում է Կարևո շրջանի վարժարանների տնօրեն Ա. Բաբաջանյանը «Ինչո՞ւ և ինչպե՞ս գաղթեցինք» հոդվածաշարում<sup>18</sup>:

1915 թվականի փետրվարի 13-ին ս. Էջմիածինը իր միջոցներով գաղթականների համար բաց է անում հատուկ հիվանդանոց, որի ղեկավարությունը հանձնվում է բժիշկ Օգսենտ Տեր-Հարությունյանին:

Այդ օրերին արդեն դեպի Էջմիածին էր շարժվում նաև Վասպուրականի 120 հազար գաղթական հայությունը: Գևորգ Ե կաթողիկոսը իր համար 462 սրբատառ կոնդակով<sup>19</sup> կոչ է անում. «Լիալոյս եմք, զի ամենայն պարտանանայ և զհտակից ազգայինք մեր սրտեռանդն ոգով օգնեցնեն նիթապէս և բարոյապէս վասն շինարար փրկարար գործունելութեանս այտորիկ՝ յօգուտ և ի փրկութիւն փախտական գաղթականաց մերոց»<sup>20</sup>:

Սրտատուչ է նաև Եղբայրական օգնության հանձնաժողովի 1915 թվականի ապրիլյան կոչը, ուղղված համայն հայ ժողովրդին:

«Արարատ» ամսագրի 1915 թվականի հունիս-դեկտեմբեր համարներում կան հաշվեցուցակներ հետևյալ վերնագրով. «Հաշիվ ս. Էջմիածնի Սիմոնոս գաղթականների առևտուրով ստացված գումարների»<sup>21</sup>, Ըստ

հաշվեցուցակների, 1915 թվականի օգոստոսի 1-ից մինչև 1917 թվականի դեկտեմբեր ամիսը հանգանակությամբ և նվիրատվությամբ Եղբայրական օգնության ֆոնդին մուտք է եղել 3.187.778 ռ. 65 կ.:

Հայ ժողովրդի վշտահար Հայրապետը 1915 թ. ապրիլի 7-ին իր կոչերով և հեռագրերով դիմում է նաև աշխարհի պետություններին ղեկավարներին («Արարատ» 1915 թ. էջ 170—175), հրավիրելով նրանց ուշադրությունը հայ ժողովրդի նահատակության վրա: Համանման գրություններ ուղղում է Կովկասի փոխարքա կոմս Էլլարիոն Իվանովիչ Վարանցով-Դաշկովին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Դմիտրիևիչ Սազանովին, Իտալիայի թագավոր Վիկտոր Էմանուել Գ-ին, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին, ֆրանսիական հանրապետության նախագահին, Անգլիայի թագավոր Գևորգ Ե-ին:

Վեհափստ Հայրապետը աշխարհի մեծ պետությունների ղեկավարներին գրած իր դիմումների մասին տեղյակ էր պահում Ազգային պատվիրակության նախագահ և իր անձնական ներկայացուցիչ Պողոս-Նուպար փաշային:

Գևորգ Ե-ի ապրիլի 7-ի թվակիր դիմումներին պատասխանում էին ռուսական արտաքին գործոց մինիստր Սազանովը և փոխարքա Վարանցով-Դաշկովը, ինչպես նաև Անգլիայի արտաքին գործոց նախարար Գրեյը («Արարատ», 1915, էջ 175—176):

Հայ գաղթականներին օգնելու կոչով Գեվորգ Ե-ն մասնավորապես դիմում է ԱՄՆ-ի նախագահին, ասելով. «Իմ ժողովրդի Տաճկաստանում կրած տանջանքներն անհուն են և անսահման: Մարդկային պատմությունն այդպիսի օրինակներ չունի»<sup>22</sup>:

Հայոց Հայրապետը իր 21 մարտի 1916 թ. համար 670 կոնդակով դիմում է նաև Ամերիկայի բարձրաստիճան եկեղեցականներին՝ Ուիլլիամս, Լեոնարդի, Մըլ-Քորմանի և Ռայլընդրայի (եպիսկոպոսներին), և կոչ է անում նրանց իրենց գործակցությունը բերել հայ բազմաշարքար և նահատակ ժողովրդին, որպեսզի «մի խախտեցի ի հիմանց ընդ Արևելս»՝ ի դրունս հնոյ աշխարհին առաքելաշախիղ եկեղեցիս Հայաստանեայց, որոյ ի նախկին դարուց անդի շողախմամբ արեան Քրիստոսի նահատակաց անսասան հատատեալ ի վերայ վիմին հաւատոյ»<sup>23</sup>:

Գևորգ Ե կաթողիկոսը կոչեր էր ուղարկում նաև Անգլիա և Ֆրանսիա, օգնելու

<sup>18</sup> «Արարատ», 1915, փետրվար-մարտ, էջ 150—169, 573—585:

<sup>19</sup> «Արարատ», 1915, էջ 101—103:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>21</sup> «Արարատ», 1915, էջ 150—151, 505—512, 664—667, 793—799, 925—928:

<sup>22</sup> «Արարատ», 1915, էջ 843—844:

<sup>23</sup> «Արարատ», 1916, էջ 163—166:

հայ ժողովրդին: 1916 թ. մայիսի 22-ին Լոնդոնի հայ փախստականներին օգնող ընկերության պատվավոր քարտուղար, վերապատվելի Հարոլդ Բաքստոն տեսակցություն է ունենում Գևորգ Ե-ի հետ և պատմում նրան Անգլիայում գործող հանձնաժողովների և ընդհանրապես հայանպաստ շարժման մասին: Անգլիայում կազմակերպված հայանպաստ շարժման գլուխն են կանգնում Լոնդոնի Լորդ Մերթ, Քենտրբերիի արքեպիսկոպոսը, Յորքի եպիսկոպոսը, Կարդինալ Պորթ, Լոնդոնի ռուսական դեսպանը, լորդ Ջեյմս Բրայսը և այլ երևելի անձնավորություններ: Հանձնախումբը Կովկաս է փոխադրում 38 հազար 239 անգլիական ոսկի հայ տառապյալներին բաշխելու:

Հիշարժան է լորդ Ջեյմս Բրայսի անկաշտ գործունեությունը ի նպաստ հայ ժողովրդի արդար դատի պաշտպանության: Հանրահայտ են մամուլում տպագրված նրա զեկուցումները: Ահա այդ առիթով է, որ ի գնահատումն նրա կատարած ազնիվ հայանպաստ գործունեության, 1916 թ. ապրիլի 27-ին Գևորգ Ե-ն կոնդակով գրում է Ջեյմս Բրայսին. «Ձի արդարամիտ և ազնուագույն որդիք ազգաց մեծաց և ազատաց, յորոց և զմին զվեսմաշուք Տերդ դիտել գիտեմք, զպաշտպանութիւն տկարացն ընկալեալ յանձինս, փութացին դատ առնել հրապարակաւ ընդ Մեզ և ընդ ոսոխի մերում և չտալ թոյլ զի իսպառ կոխան լիցուք ոտից թշնամեաց մերոց»<sup>24</sup>:

Մեծ եղեռնի դժվարին օրերին Ֆրանսիայում կազմակերպվում է ֆրանս-հայկական մի ընկերություն, որն իր ամենաջերմ համակրության զգացումներն է դրսևորում հայ ազգի հանդեպ: Այդ հանձնաժողովը բաղկացած էր նշանավոր անձերից: Այդ հանձնաժողովին ևս Գևորգ Ե կաթողիկոսն ուղղում է իր գոհունակության և օրհնության խոսքը, մաղթելով նրանց կատարյալ հաջողություն, հույս հայտնելով, որ նրանց համակրությունները, և անձնվիրությունը հայ դատի պաշտպանության նկատմամբ կըպասկվի հաջողությանը և հայ ահաբեկ ժողովուրդը հավետ երախտապարտ կլինի նրանց:

Գևորգ Ե իր մասնակի ուշադրությանն է արժանացնում Անատոլ Ֆրանսի գործունեությունը ի նպաստ հայ ժողովրդին<sup>25</sup>:

Համանման կոնդակներ Գևորգ Ե-ն գրել է Ժնևի հայանպաստ հանձնաժողովի նախագահ Լեոպոլդի Ֆաուրիին, որտեղ վըշտահար հայրապետը գրել է. «Գոհանամք զՁեզ, զի տառապանս հօտին մերոյ, ոչ հա-

մեցաք տարածանել զբազուկ մարդասիրականիդ և հայրանակակցացդ ի բարձուստ, ի լերանց Ալպեաց... Ճնորհս ունիմք առ Ձեզ վասն գործոց առաքինութեան Ձերոյ»<sup>26</sup>:

Գևորգ Ե-ն կատարում է նաև գործնական քայլեր, կորուստից փրկելու համար մեր մշակույթի արժեքավոր գանձերը: Կաթողիկոսը, նկատի առնելով ռուսական գորբերի ստաչացումը, Մուշի և շրջակա գյուղերի ազատագրումը ռուսների կողմից, նշանակում է մի աշրակախումբ (Մայր Աթոռի միաբան Իսահակ սրկ. Տեր-Ղազարյան (հետագայում Գյուտ եպիսկոպոս), ճեմարանի տեսչի օգնական Ավետիք Տեր-Պողոսյան և ճեմարանի ուսուցիչ Բահաթոր Բահաթորյան), որոնք Մայր Աթոռից պիտի գնային Մուշ և նրա շրջակայքը, հետևյալ հրահանգություններով.

ա) Մուշի և շրջակայքի ժողովրդի գաղթի ժամանակ, վանքերի և եկեղեցիների գույքը, զարդերը, եկեղեցական անոթները, որոնք զանազան թաքստոցներում պահված էին, ինչպես նաև վանքերին և եկեղեցիներին պատկանող ձեռագրերը գանել, հավաքել, ցուցակագրել և ուղարկել Մայր Աթոռ:

բ) Ծանոթանալ ժողովրդի այժմյան վիճակին, ուր լինելու և քանակի մասին, հնար եղածին չափ, ավերից և կողոպուտից ազատված ազգագրական, հնագիտական արվեստի և այլ մնացորդները ժողովել և հասցրնել Մայր Աթոռ՝ ա. Էջմիածին, ինչպես և տեղական թշվառ հայ ժողովրդի մնացորդներին ցույց տալ հոգատարություն և խնամարգություն:

Մուշ գնացող արշավախմբի անդամները 1916 թ. մարտի 29-ին մեկնում են Մայր Աթոռից և մայիսի 29-ին վերադառնում ա. Էջմիածին ու վեհափառ Հայրապետին ներկայացնում իրենց զեկուցագիրը: Պարզվում է, որ Մուշի շրջանի վանքերը ավերված են, ա. Կարապետի վանքի զանգակատունը կանխօրոք մտածողությամբ և ուժանակի միջոցով պայթեցված: Այդ շրջանում մնացել են վեց հազար հոգի: Արշավախմբի անդամները գտել են մի թաքստոց ա. Կարապետի վանքին պատկանող եկեղեցական զգեստների ու սպասքների և մասնավոր անձանց մոտ գտնվող արժեքավոր ձեռագիր մատյաններ, որոնք հանձնաժողովի անդամների շնորհիվ բերվել են Մայր Աթոռ<sup>27</sup>:

Արժանի է հիշատակության նաև Վասպուրականի վանքերի որոշ սրբությունների և մշակութային արժեքների ազատագրումը Հովհաննես վարդապետ Հյուսյանի կողմից.

<sup>24</sup> Նույնը, էջ 314:  
<sup>25</sup> «Արարատ», 1916, էջ 369—386;

<sup>26</sup> Նույն տեղ:  
<sup>27</sup> «Արարատ», 1916, էջ 566—586:

Դիվանի գրություն մայր տաճարի լուսարարապետի անունով, որով հանձնարարվում է Վանից տեղ Հովհաննես վարդ. Հյուսիսահին ողարկած եկեղեցական արծաթյա իրերը բանալ տեղ Սահակ արքեպիսկոպոս Այվատյանի և լուսարարապետի օգնական Արիստակես վարդապետի ներկայությամբ, ցուցակագրել և պահել Մայր տաճարի խորանում, ցուցակը ներկայացնել դիվանատուն<sup>28</sup>:

«Արարատ»-ը իր հրատարակության առաջին օրից զբաղվել է ոչ միայն հայության արևմտյան հատվածի լեզվական հարցերով

(«Արարատ», 1868, համար 1), այլ նաև հանգամանորեն զբաղվել է արևմտահայության ազգային, եկեղեցական, ազատագրական ու հայկական հարցերով:

Հայ ժողովրդի համար տազնապալի օրերին «Արարատ»-ը հույս և հավատ ներշնչելով բովանդակ հայ ժողովրդին իր պայծառ ապագայի մասին, գրում էր. «Հայ ժողովրդի առաջադիմության համար հայ գիրը և գրականությունը հիմնական սկզբունքն է և հայ մարդը լուր ծանր, նեղ օրերին անգամ գրի-գրականության վրա պետք է կենտրոնացնի իր ուշքը»<sup>29</sup>:

<sup>28</sup> Նույնը, էջ 773:

<sup>29</sup> «Արարատ», 1917, էջ 850:

